Հավելված N 1
ՀՀ կառավարության 2023 թվականի
հունվարի 12-ի N 37-Ն որոշման

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ԿԱՊԱՐԱԿՆԻՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԵՏԱԳԾԵԼԻՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԱԶԳԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Ազգային օպերատորը պետք է բավարարի հետևյալ հիմնական պահանջներին՝

1) ապահովի «Եվրասիական տնտեսական միությունում ապրանքների փոխադրման հետագծելիության նպատակով տեղորոշման կապարակնիքների օգտագործման մասին» համաձայնագրի (այսուհետ՝ համաձայնագիր) 5-րդ հոդվածով սահմանված՝ ազգային օպերատորներին վերապահված գործառույթների իրականացումը.

2) հանդիսանա Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ իրավաբանական անձ: Ազգային օպերատորի ընտրության համար անցկացվող մրցույթին (այսուհետ՝ մրցույթ) իրավաբանական անձանց կոնսորցիումի մասնակցության դեպքում անդամներից առնվազն մեկը պետք է հանդիսանա Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ իրավաբանական անձ.

3) ունենա համապատասխան որակավորմամբ աշխատանքային ռեսուրսներ, էլեկտրոնային կառավարման համակարգի մշակման, տեղայնացման և տեխնիկական աջակցության (սպասարկման) ապահովման համար՝ հետևյալ համամասնությամբ և մասնագիտական աշխատանքային փորձով՝

ա. 1 նախագծի ղեկավար՝ առնվազն 3 տարվա աշխատանքային փորձով,

բ. 1 բիզնես վերլուծաբան՝ առնվազն 3 տարվա աշխատանքային փորձով,

գ. 1 ծրագրավորող՝ առնվազն 3 տարվա աշխատանքային փորձով,

դ. 2 ծրագրավորող՝ առնվազն 2 տարվա աշխատանքային փորձով,

ե. 2 ծրագրավորող՝ առնվազն 1 տարվա աշխատանքային փորձով,

զ. 1 որակի ապահովման մասնագետ՝ առնվազն 1 տարվա աշխատանքային փորձով.

4) ապահովի համաձայնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից սահմանվող պահանջներին համապատասխանող տեղորոշման էլեկտրոնային կապարակնիքների կիրառությունը.

5) ապահովի համաձայնագրի 9-րդ, 12-րդ և 13-րդ հոդվածներով նախատեսված անհրաժեշտ գործողությունների իրականացումը.

6) ապահովի համաձայնագրի 17-րդ հոդվածով և 18-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված ժամանակավոր ինտեգրացիոն լուծումների իրականացումը.

7) հավաստի Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետությունների ազգային օպերատորի (օպերատորների) հետ համագործակցության հնարավորությունը՝ հանձնաժողով ներկայացնելով ազգային օպերատորի (օպերատորների) հետ կնքված նախնական պայմանագրի կամ մտադրությունների համաձայնագրի կամ պայմանագիր կնքելու հավաստման պատճենը.

8) իրականացնի ուսուցում վերահսկող մարմնի աշխատակիցների համար:

2. Հայաստանի Հանրապետության վերահսկող մարմնի հասանելիությունը ազգային օպերատորի տեղեկատվական համակարգին պետք է ապահովվի անվճար:

3. Ազգային օպերատորի լիազորությունների դադարեցման որոշման դեպքում ազգային օպերատորը Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին պետք է տեղեկացնի այդպիսի որոշման մասին՝ լիազորությունների դադարեցման նախատեսվող ամսաթվից առնվազն 6 ամիս առաջ: Նշված ժամկետի ընթացքում չտեղեկացնելն առաջացնում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված պատասխանատվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

12.01.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ